

ՁԵՌԱԳՐԱՊԱՀՈՑԻ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄԸ

Այս օրերին, երբ մեր ժողովուրդը իր վերջին հրաժեշտն է տալիս մեծագործ Հայրապետ Վազգեն Ա-ին, Մաշտոցի անվան Մատենադարանի յուրաքանչյուր աշխատակից խորին ակնածանքով ու եռեռախտագիտությամբ գըլուխ է խոնարհում նրա աճյունի առջև:

Իր հոգևոր գործունեության առաջին իսկ օրերից հանգուցյալ Հայրապետը, հավատարիմ իր նախորդների ավանդներին, ուշադրության կենտրոնում է պահել, ի թիվս բազում այլ կարևոր խնդիրների, նաև հայ մշակույթի արժեքների փրկությունն ու հայրենադարձությունը:

Դեռևս Ռումինիայում գտնված տարիներին նա կորստից փրկել և Մաշտոցյան Մատենադարան է ուղարկել միջնադարյան հայերեն բազմաթիվ գըրչագիր մատյաններ, իսկ ավելի ուշ, Երուսաղեմյան 23 եզակի ձեռագրերի տագնապի օրերին, ամենայն ջանք ի գործ է դրել՝ խափանելու դրանց վաճառքը Լոնդոնյան աճուրդում և վերադարձնելու Երուսաղեմ:

Երջանկահիշատակ Վեհափառին ենք պարտական այն երկու հնագույն մատյանների համար (7—8 և 10-րդ դարերից), որոնք հանգրվանել են Մատենադարանում «Վեհափառի» և «Վեհամոր» Ավետարաններ անվանումներով, Թորոս Ռոսլինի ծաղկած «Զեյթունի» և «Մալաթիայի» Ավետարանների, ինչպես նաև 10-րդ դարի պատմիչ Թովմա Արծրունու աշխարհում պահպանված միակ ձեռագիր օրինակի և բազմաթիվ այլ գրչագրերի, դիվանական եզակի թանկարժեք փաստաթղթերի ու հնատիպ գրքերի համար:

Հանգուցյալ Հայրապետը հաճախ էր այցելում Մատենադարան, իր բարձրաստիճան հյուրերին անձամբ էր ուղեկցում և հպարտությամբ նրանց ծանոթացնում մեր միջնադարյան մշակույթի գանձերին. իր հայրական խորհուրդներն էր տալիս հայ ձեռագրագետներին և հնարավոր բոլոր միջոցներով սատարում Մատենադարանի բարգավաճմանը:

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահով Մաշտոցյան Մատենադարանը կորցրեց իր մեծ բարեկամին:

Գլխահակ ագում ենք անխոնջ Հովվապետի մահը:

ԲԱԲԿԵՆ ՁՈՒԳԱՍԶՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՄՇԱԿ